№ 152 Օգոստոսի 18 (30) 1881 Օգոստոսի 18 (30) № 152

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարքաղաքացիք դիմում են ադրէսի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երեւի մի պատճառ կայ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ Նամակ Ախալցխայից։ Նամակ Նոր-Բայազէթից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ Հայոց խնդիր։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝ Ծախսարար Մինաս փէզօիչ։

ԵՐԵՒԻ ՄԻ ՊԱՏՃԱՌ ԿԱՅ

—

Հայերի և հրէաների մէջ մի նմանութիւն կայ, այն է որ ամենքը թէև շատ ընդունակ և խելօք են համարում թէ հրէաներին և թէ հայերին, բայց ոչ ոք չէ սիրում ոչ հայերին, ոչ էլ հրէաներին։

Ի՞նչ է այդ անբացատրելի հակակրութեան պատճառը, որ ամեն ազգերը ունեն դէպի հրէաները և դէպի հայերը։ Երեւի այդ հակակրութեան համար մի հիմնական պատճառ կայ....

Այդ պատճառը մեր միջն է՝ հրէաների և հայերի մէջ։ Այդ երկու ազգութիւնները ունեն անթիւ խոշոր պակասութիւններ, որոնք նրանց հակակրելի են դարձնում միւս ազգութիւններին.... Ազգային դաստիարակութիւնը, պատմական հանգամանքները ստիպում են այդ տեսակ ազգերին, ինչպէս հայերն ու հրէաները, մշակել իրանց համար առանձին սկզբունքներ, որոնք համապատասխան չեն ընդհանուր մարդկութեան մէջ ընդունված բարոյականութեան սկզբունքներին։ Այդ երեւոյթը մանաւանդ նըկատվում է հրէաների մօտ։

Աշխարհիս երեսին գրեթէ մի ազգութիւն չը կայ, որ չատեր հրէաներին։ Երեւի պատճառը նոյն իսկ հրէաների մէջն է։

Վերջին ժամանակները, մանաւանդ հրէաների ջարդից յետոյ, Ռուսաստանի հրէաները, կարծես զգացին, հասկացան այդ ճշմարտութիւնը։ Նրանք հասկացան թէ պէտք է նորից դաստիարակեն իրանց, փոխեն իրանց մէջ տիրապետող բարոյական վարդապետութեան հիմունքները։

Եւ ահա կազմվեցաւ հարաւային Ռուսաստանի հրէաների մէջ մի տեսակ նոր աղանդ, որ գլխաւորութիւն ունի մաքրել հին-կտակարանը Տալմուդի մոլեռանդ ազդեցութիւնից և որ անուանվում է բիբլիական հոգեւոր եղբայրութիւն։

Այդ եղբայրութիւնը անխնայ կերպով քննադատում է նոյն իսկ հրէաների պակասութիւնները և առաջարկում է նրանց բարոյապէս վերանորոգվել։ Մի պատճառ պէտք է լինի, որ ամենքը մեզ ատում են, ատում են առաջադէմ եղբայրութեան անդամները, իսկ մեզ ատում են, որովհետև մենք հարստահարում ենք, վաշխառութիւն ենք անում, խաբում ենք, կողոպտում ենք այն ազգերին, որոնց շրջանում բնակվում ենք։ Բիբլիական հոգեւոր եղբայրութեան գլխաւոր սկզբունքները սրանք են. չը պէտք է գինեվաճառութեամբ պարապել, չը պէտք է փողերը տոկոսով տալ, չը պէտք է հարստահարել, չը պէտք է խաբել, չը պէտք է թուղթ խաղալ և այլն։

Եւ զարմանալի երեւոյթ. վերջին տասը տարվայ ընթացքում յայտնվեցաւ և հայերի մէջ անձնաքննական մտրակող ուղղութիւնը, որի ներկայացուցիչը „Մշակն" էր։ Նոյն երեւոյթը նշմարվեցաւ երկու ազգութիւնների մէջ։ Նոր ուղղութիւնը ասում էր. երեւի մի պատճառ կայ, որ մեզ ամենքը ատում են, քննադատենք մեզ ուրեմն, անխնայ քննենք մեր խոշոր պակասութիւնները։ Եւ երկու ազգութիւնների մէջն էլ անմիջապէս լսվեցաւ հին կուսակցութեան ձայնը, որ աննկարագրելի կերպով վրդովվեցաւ թէ յայտնվեցաւ մի նոր ուղղութիւն, որ անխնայ քննադատել համարձակվեց ազգի հին պակասութիւնները։

Ազգութեան և եկեղեցու դաւաճան, անուս մանուկներ, յիմարներ և այլ և այլն,—ահա այն ածականները որոնք թափվեցան հայերի հին կուսակցութեան բերանից անձնաքննութիւնը առաջարկող նոր կուսակցութեան դէմ, նոյն բառերով այժմ հրէական հին կուսակցութիւնը վերաբերվում է դէպի բարոյական և հասարակական վերանորոգութիւնը առաջարկող հրէական նոր կուսակցութիւնը։

Այս րօպէիս Ռուսաստանում ռուսերէն լեզուով հրատարակվող հին հրէական օրգանները խօսք չեն գտնում որ խայտառակեն վերանորոգիչ հրէական նոր կուսակցութիւնը։ Օրգանները ինչպէս „Восходъ" և „Разсвѣтъ" կատաղած են որ երիտասարդ հրէական կուսակցութիւնը անխնայ քննադատում է հրէական ազգի հին պակասութիւնները և նրա յանցաւոր ձգտումները։

Նրանց կարծիքով անձնաքննութեան դրօշակը բարձրացնել հրէական հասարակութեան, հին եկեղեցու, ընտանեկան կազմակերպութեան, բարք ու վարքերի, հին բարոյական սկզբունքների դէմ,—նշանակում է ոչ թէ վերանորոգել ազգութիւնը, աւելի արժանաւոր դարձնել նրան ժամանակակից մարդկային կեանքի մէջ ապրելու, այլ նըշանակում է քանդել ազգութիւնն ու եկեղեցին։

Հին հրէական կուսակցութեան կարծիքով հրէայի պակասութիւնները, նրա յանցաւոր, տգեղ, հակակրելի հակումները ազգային յատկութեան մի մասն են կազմում, ուրեմն քանդել նրանց, նշանակում է քանդել ազգութիւնը։

Արդեօք այդ շարժման և մեր հայերի այժմեան շարժման մէջ չը կայ մի նմանութիւն։

Մեր հին կուսակցութիւնն էլ կարծում է որ քննադատել մեր դարեւոր ազգային պակասութիւնները, նշանակում է վնասել նոյն իսկ ազգային գոյութեանը, քանդել նոյն իսկ ազգութիւնը։

Իսկ մեր կարծիքով դա նշանակում է վերանորոգել ազգութիւնը և պատրաստել նրան աւելի արժանաւոր կեանքի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Օգոստոսի 14

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է մեր եկեղեցիների երեցփոխան Յովհաննէս Վանեցեանի ապօրինի վարմունքը եկեղեցական կայքերի և դրամների հետ և երեք տարի հաշիւ չը գրելը ժապաւինեալ մատեաններում, որոնք ներկայիս կոնսիստորիայի արխիվում բանտարկված են։

Ժողովրդի խնդրագրին համաձայն, Թիֆլիսի կոնսիստորիան հրամանագրեց տեղւոյս հոգեւոր կառավարութեանը, հրաւիրել ժողովուրդը և ընտրել նրանց միջից հաշուատեսներ, հրամաբեալ Վանեցեանի մանր մունր սեպհականութիւնները քննելու և կոնսիստորիային զեկուցանելու համար։ Ամսիս 9-ին կիրակի օրը, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ, բարեկարգիչ քահանայի հրաւիրանօք, խուռն բազմութիւն ժողովրդոց հաւաքվեցան Ս. Փրկիչ եկեղեցու գաւիթը և ընտրեցին հաշուատեսներ՝ Ղազարոս քահանայ Պահլաւունուն, Մկրտիչ քահանայ Գահվաճեանցին, պ. պ. Կարապետ Մութաֆեանցին, Յարութիւն Սիրունեանցին, Վահան Ֆէնէրճեանին, Վահան Գրիգորեանցին, Յարութիւն Ղազարեանցին, Մկրտիչ Տէր Մարտիրոսեանցին, Գրիգոր Ճէպէճեանցին և Թորոս Լազարեանցին։ Հոգեւոր կառավարութիւնը հաստատեց յիշեալ հաշուատեսներին և հրամանագրեց որ հետեւեալ օրը հաւաքվեն և սկսեն հաշիւները քննել։ Մի հրամանագրով էլ Վանեցեանին հրաւիրեց, որ գայ և իրան թղթերը յանձնէ։ Նշանակեալ ժամանակին հաւաքվեցան բոլոր հաշուատեսները, բայց Վանեցեանը չը ներկայացաւ, այլ յայտարարութիւնով յայտնեց հոգեւոր կառավարութեանը, որ տկարութեան պատճառով չէ կարող գալ և թղթերը յանձնել. մինչև անգամ սպառնում էր որ եթէ հոգեւոր կառավարութիւնը յանդգնի հաշիւներին մօտ գնալ՝ նա կը դիմէ օրէնքին։ Պ. պ. հաշուատեսները հաստատ գիտ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱԽՍԱՐԱՐ ՄԻՆԱՍ ՓԷԶՕԻՉԸ

—

Հարկաւոր է ունենալ Գօգօլի տաղանդը, որ կարելի լինի դուրս բերել ամբողջապէս այս տիպը։ Ես միայն ցոյց կը տամ ընթերցողին նրա մի քանի գծերը։ Այս տիպը ունի պատմական նշանակութիւն, որովհետև նա արտադրութիւն է այն բիւրոկրատական կեանքի, որ թագաւորում էր դատաստանական ռեֆորմերից առաջ։

Մինաս փէզօիչին ամենայն իրաւունքով կարելի է անուանել բիւրոկրատական կեղծաւորութեան, ստի, չողոքորթութեան և կեղտոտութեան զամբիւղ։

Թողնելով միանգամայն նրա մասնաւոր կեանքը, ես կը ներկայացնեմ ընթերցողին միայն նրա ծառայողական գործունէութիւնը։

Մինաս փէզօիչը ունի մի միջակ դրամագլուխ, որ ձեռք է բերել իր «չինօվնիկական» յատկութիւնների շնորհիւ։ Տաս տարուց աւելի է, որ նա վարում է մի դիւանատան մէջ ծախսարարի պաշտօն։ Ի՞նչ է պակաս։ Դմակն էլ է իր ձեռքին, դանակն էլ՝—ինչ ուզում է կտրում է։ Ինչ որ գնի դիւանատան համար՝ ցախ, մոմ, թուղթ, գրիչ, մահուդ—բոլորից իր համար միշտ «տասանորդ» կը հանի։ Որոշված է, օրինակ, որ գիշերները պարապող ամեն մի գրագրի առաջ պէտք է մի մոմ լինի, բայց Մինաս փէզօիչը երեքին տալիս է մէկ մոմ, իսկ երկուսը աչքարատանում է իր տունը։ Նրանից խօ թուղթ ուզելը ու նրա մսից պոկելը մի և նոյն ցաւն է։ Առանց աղմուկի ոչ սէկին մի թերթ անգամ չի տայ։

Մեծ օգուտ է տալիս Մինաս փէզօիչին այն հանգամանքը, որ դիւանատունը ամենայն տարի ամարանոց է գնում։ Կահ-կարասիքը տանելու համար ծախսարարի պարտականութիւնն է արաբանիր վարձել։ Մինաս փէզօիչը վերցնում է, օրինակ, 10 արաբա. բացի նրանից, որ վարձը երկու անգամ աւելի է ցոյց տալիս, նա մի և նոյն ժամանակը աշխատում է տեղաւորացնել բոլոր ծանրութիւնը 8 արաբայի վրա—իսկ երկուսը ծառայեցնում է իրան։ Ամարանոցը տալիս էր և ուրիշ արդիւնքներ։ Հաստատ փաստ է, որ սըրանից 3—4 տարի առաջ դիւանատան գլխաւորի ամարային բնակարանում միշտ կորչում էին չուգունէ պլիտաները։ Հէնց կը գային ամարանոց,—պլիտաները անհետացել են։

—Մինաս փէզօիչ, պլիտաները ուր են։ Ջէ որ քո հսկողութեանն է յանձնված, ինչու չես լաւ մտիկ տալիս—նեղանալով հարցնում է տիկինը։

—Ինչ անեմ, խանումջի, պատասխանում է Մինաս փէզօիչը, էգ լիրբ, աւազակ մալականների հախիցը գալ չի լինում, հէնց աչքդ չուռ ես տալիս—թռցնում են ամեն բան։

Բայց այդ լիրբ, աւազակ մալականը հէնց ինքը Մինաս փէզօիչն էր։ Մի քանի տարի նա յաջողութեամբ կատարեց մալականի դերը, բայց մի անգամ բռնվեց։

Աստիճանաւորներից մէկը յանձնել էր նրան մի քանի նորոգութիւններ անել իր բնակարանում։ Մինաս փէզօիչը յաջողութեամբ կատարում է յանձնարարութիւնը և ինչպէս վարձատրութիւն փեշի տակին դուրս է բերում վառարանի երկաթեայ դռները։ Աստիճանաւորը այդ իմանում է և միւս օրը մտնում է դիւանատան այն սենեակը, ուր սովորաբար պարապում է Մինաս փէզօիչը մի քանի ուրիշ ծառայողների հետ։

—Մինաս փէզօիչ, իմ բնակարանի վառարանի դռները կորել են։ Ո՞ւր են անհետացել, չը գիտես—հարցնում է նա։

—Ես ինչ իմանամ, աղա. երևի մշակներն են գողացել։

—Գողը հէնց դու ես, լիրբ, աւազակ, անամօթ! Լաւութիւն և քրտնքի կաթիլներ....

—Ես քեզ դատաստանի տակ կը գցեմ, քո կաշին քերթել կը տամ, скатина! мерзавецъ!...

Մինաս փէզօիչը դողալով ուզում է ծունկ չոքել նրա առաջ, բայց այդ րօպէին մի գունդ թուք դիպչում է նրա խաչած կոշկի պէս կարմրած երեսին և աստիճանաւորը դուրս է գալիս սենեակից...

—Անուշ լինի, Մինաս փէզօիչ! շնորհաւորում են ներկայ եղող ծառայողները, մի ընդհանուր ծիծաղ բարձրացնելով։

Մինաս փէզօիչը առանց նրանց նայելու հանգստութեամբ հանում է թաշկինակը, սրբում է երեսը և նորից շարունակում գրել։

—Какъ съ гуся вода! նկատում է մէկը։

—Շան երես ունի, դա խօ մարդ չի—պատասխանում է միւսը բարձր ձայնով։

Մինաս փէզօիչը խլի պէս շարունակում է իր պարապմունքը։

Գանք ուրիշ արդիւնքներին։

Դիւանատան համար ծառաներ բռնում է միշտ ծախսարարը։ Նրանք բոլորովին վերջինի իրաւունքի տակ են։ Մինաս փէզօիչը ամեն անգամ նոր ծառայ բռնելիս կանչում է նրան իր մօտ և մանրամասնապէս յայտնում է նրան բոլոր պայմանները։

—Ծառայի համար նշանակված է ամսական 15 րուբլի—ասում է Մինաս փէզօիչը—իսկ դու կը ստանաս 10 րուբլի։ Թէ ուր է գնում մնացած հինգ րուբլը—այդ քո գործը չէ։ Տէրութիւնը մեծ ծախսեր ունի և շատ պարտք։ Եթէ համաձայն ես ստանալ ամսական 10 րուբլ և «գավթարում» ստորագրել 15—էգուցուանից կարող ես սկսել պաշտօնդ։

նալով, որ վ․ անցեանը հիւանդ չէ, յայտնեցին հոգևոր կառավարութեանը խիստ միջոցների դիմել և նրան բերել տալ. բայց հոգևոր կառավարութիւնը փոխանակ նրանց լսելու հետևեալ կարգադրութիւնն արաւ. այսինքն պահանջել վ․ անցեանից որ տկարութեան համար վկայական ներկայացնէ. և երկու օր ժամանակ տուեց: Երկու օրից յետոյ հոգևոր կառավարութիւնը ստացաւ իրան ցանկացած վկայականը և ներկայացրեց հաշուետեսներին: Վ․ երջիններս առանց ուշադրութիւն դարձնելու վ․ անցեանի վկայականին և սպառնալիքներին, խնդրեցին հոգևոր կառավարութիւնից որ բաց անէ իրան կնիքը և թղթերը յանձնէ, բայց կառավարութիւնը չը համաձայնեցաւ և հեռագրեց կօնսիստօրին: Գերապատիւ Մամբրէն պատասխանեց որ, եթէ վ․ անցեանը հիւանդ է, հարկաւոր է ստիպել նրան որ մի հաւատարմատար նշանակէ իրան կողմից: Միթէ կարելի է հիւանդին ստիպել, մանաւանդ վ․ անցեանին, որ ուղեղի հիւանդութիւն էլ ունի, ինչպէս վկայականից երեւում է.... վ․ անցեանին յայտնեցին կօնսիստօրի հրամանը, բայց նա ոչ պատասխանեց, ոչ էլ իր կողմից մարդ նշանակեց: Այն ինչ կօնսիստօրիան պատուիրում է անյապաղ վերջացնել հաշիւների քննութիւնը, միւս կողմից պաշտպանողական դիրք է բռնում և նպաստում է գործի ձգձգվելուն: Ի՞նչ հարկ կայ երկար բարակ գրագրութիւններ անել: Հոգևոր իշխանութիւնն էլ, ախալցխացիքս ամէնքս էլ գիտենք, որ վ․ անցեանը ամենաաղքատ մարդն է մեր քաղաքում եթէ նա եկեղեցական գումարները վատնել է, նրանից ի՞նչ կարող ենք ստանալ: Նշանակութիւն չունի նրա առողջ կամ հիւանդ լինելը: Ինչքան որ գործը երկարէ, այնքան մեր եկեղեցիները մեծ վնասներ կունենան, ուրեմն հարկաւոր է օր առաջ բաց անել կնիքները, հաշիւներին վերջ տալ, և եկեղեցական կայքերի, զարդերի և այլոց ցուցակները յանձնել նորընտիր երեսփոխանին, որ նա հսկէ նրանց պահպանութեան վրայ: Իսկ վ․ անցեանի հետ՝ հոգևոր իշխանութեան գործն է վարվել ըստ օրինի: Հրաւիրում ենք գերապատիւ Մամբրէի ուշադրութիւնը այս բանի վրայ:

Օտարական

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

—

Օգոստոսի 11

Անցեալ յուլիսի 24-ին նորին գերազանցութիւն Երևանեան նահանգապետ Շալիկօվ առաջին անգամ այցելեց մեր խղճալի Նոր-Բայազէթը, որի հասկացող դասը սպասում էր նորանոր բարենորոգումների քաղաքիս վերաբերմամբ: Տեղիս պատուաւոր անձինք խումբեր կազմած, փոխանակ քաղաքիս բարելաւութեան համար խնդիրների, զանազան անբաւականութիւններ, գանգատներ, զրպարտութիւններ մէկը միւսի դէմ արտայայտեցին ասելով «այս ինչ դատաւորը, կամ այն ինչ անձնաւորութիւնը լաւ կամ վատ բնաւորութիւն ունի»: Եւ վերջապէս այսպիսի պարզ և անտեղի խօսակցութիւններով պատահեցին նորին գերազանցութեան: Նորին գերազանցութիւնը այցելեց քաղաքիս ռուսաց և հայոց եկեղեցիները, զինուորանոցը, բանտունը, գանձարանը, պօլիցիան և ուղևորվեց գաւառիս գիւղերը այցելելու, չը կամենալով որ իրեն առաջնորդեն ծառայողներից, միայն երկու ձիաւորներ վերառաւ և երեք օրից յետոյ վերադարձաւ և ուղևորվեց դէպի Ծաղկաձոր, խոստանալով որ սեպտեմբերին կրկին այցելէ մեր քաղաքը և յայտնեց, որ այստեղ նոր գաւառապետ է նշանակվելու: Նորին գերազանցութիւնը և հայ եկեղեցու և իր կացարանի մէջ և այստեղից հեռանալու ժամանակ շատ բարեխրատական խրատներ էր կարդում հասարակութեանը ասելով. «մի քանի անհատներով այս քաղաքը չէ կարող բարօրութեան հասնել, դուք հարուստներդ պէտք է ինչպէս մարդ խնամէք ձեր դրացիներին, ամեն հարկաւոր օգնութիւնները մատուցանէք հասարակութեան օգտի համար. մի քանիսներով չէ կարելի կազմել հասարակութիւն, չը պէտք է հարուստների կողմից անբաւականութիւններ ստանան ինչպէս միջին, նոյնպէս ստորակարգ դասը ժողովրդեան»: Այո, այս խօսքերը հասկանալի էին հասկացող և հարստահարված դասերի համար: Մի և նոյն է մեր Նոր-Բայազէդը և հիմայ: Խաղաղական դատակնիք են կազմում տէրութեան նշանակված աստիճանաւորները կամ մի քանի աղքատ անհատներ քաղաքիցս աքսորելու նպատակով. և այս նրա համար, որովհետև դատաւորը օրէնքները չէ կամենում ծառայեցնել այս ինչ կամ այն ինչ մի յիմար անձնաւորութեան տղայական կամքին կամ աղքատը իր տուն ու տեղը չէ կամենում առանց վարձատրութեան ընծայել աղայի բարեկամին:

Վ․ աճառական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ Եալտայի մօտ գտնված Օրեանդա պալատը, որ պատկանում է մեծ իշխան Կօնստանտին Նիկօլայեվիչին, այս օրերս այրվեցաւ: Կրակը սկսվեցաւ վերնայարկից:

—

Մեր աշխատակից պ. Րաֆֆի խնդրում է մեզ յայտնել այն պարոններին, որոնք յանձն են առել նրա գրքերը վաճառել թէ Թիֆլիսում և թէ գաւառներում, բարեհաճեն գոյացած փողերը ուղարկել «Մշակի» խմբագրատանը հեղինակի իսկական հասցէով:

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են որ օգոստոսի 10-ին գիշերվայ ժամը 2-ին այդտեղ զգալի եղաւ երկրաշարժի բաւական սաստիկ հարուած, բայց անվնաս անցաւ: Եղանակը այս ամառը, ինչպէս մեզ գրում է մեր թղթակիցը, բաւական հով և անձրևային է անցնում Ղարաբաղում: Մեզ գրում են նոյնպէս որ այժմ Շուշում տարածված է մի հիւանդութիւն, որ շատ երեխաներ է փչացնում. երեխայի մարմինը սկսում է դուրս տալ, յետոյ բողազը ուռչում է և խեղդում է երեխային: Այս հիւանդութիւնը, որ գուցէ դիֆտէրիտն է, Շուշում անուանում են գ ի ւ լ տ ա ր ա ն:

—

Մեզ գրում են Շուշուց հետևեալ անհաւատալի երևոյթի մասին: «Այստեղի մի այգու մէջ մի տանձենի, որի կէսի տերևները չորացած, համարեա թափված էին, իսկ միւս կէսի վրա մի քանի տանձեր ունի, այս օրերս նորից սկսեց ծաղկել և ծաղիկները երևացին նոյն իսկ այն ճիւղերի վրա, որոնք զուրկ էին տերևներից»:

—

Ս. Պետերբուրգի նահանգի ռուս ազնուականները դիտաւորութիւն ունեն խնդրել կառավարութեանը որ իրանց զաւակների համար, որոնք սովորում են պետական դպրոցներում, ուղղափառ կրօնի դասատուութիւնը պարտադիր չը լինի, ինչպէս և բոլոր այլակրօնների համար:

—

«Petersburger Ztg.» լրագիրը հաղորդում է որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի կրկին մտցնել համազգեստներ (մունդիր) համալսարանների ուսանողների համար, ինչպէս եղել է Նիկօղայոս կայսրի ժամանակ: Համազգեստը կունենայ արծաթեայ կոճակներ, մուգ կապոյտ օձիք և ուսանողները կը կրեն համազգեստի հետ և մի թուր:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնել է հետևեալ տակսա մինչև սեպտեմբերի 1-ը: Թըխած հացը ցորենի ալիւրից առաջին տեսակի ֆունտը արժէ $5^{1}/_{2}$ կոպէկ, երկրորդ 4 կոպ., տեղական ձևով թխած հացը նոյն ալիւրից, ֆունտը արժէ առաջին տեսակը 6 կ., երկրորդ $4^{1}/_{2}$ կ., ցորենի և կրուպչատկայի ալիւրից խառն հացը՝ լաւաշներ առաջին տեսակի ֆունտը 7 կ., երկրորդ $5^{1}/_{2}$ կ., երրորդ 5 կ.: Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 9 կ., երկրորդ 7 կ., սուկի 15 կ., ոչխարի մսի ֆունտը 9 կոպէկ:

—

«Страна» լրագրին գրում են հետևեալը: «Մեզ հաղորդում են որ կովկասեան վարչութիւնը երկիւղ կրելով որ կովկասեան խաղողի վազերը կը վարակվեն ֆիլօկսէրայի հիւանդութեամբ, խնդրում էր պետական գանձից 12.000 րուբլի օժանդակութիւն այդ հիւանդութեան Կրիմից Կովկաս անցնելուն առաջն առնելու համար: Այժմ, ինչպէս երևում է, ֆիլօկսէրա արդէն տարածվել է Անդրկովկասում և նրան ոչնչացնելու համար տեղական վարչութիւնը խնդրում է պետական գանձից 50,000 րուբլի»

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ ներքին գործերի մինիստրութիւնը մի շրջաբերական հրատարակեց, որով հարաւային Ռուսաստանի նաւահանգիստներում արգելվում է բնակվել որոշ պարապմունք չունեցող ռուսահպատակ և առուտուրով պարապող, բայց օտարահպատակ հրէաներին:

—

«Новое Время» հաղորդում է որ երկու անձինք, որոնք բարձր պաշտօն ունեն Ս. Պետերբուրգի բժշկական վարչութեան մէջ, այս օրերս կառավարութեան հրամանով ենթարկվեցան դատաստանի, որովհետև ծախում էին մեծ գումարով պաշտօններ երիտասարդ բժիշկներին: Օրինակի համար Ս. Պետերբուրգում բժշկի տեղ ստանալու համար նորաւարտ երիտասարդ բժիշկները պէտք է վճարէին այդ պարոններին 1000 րուբլի, իսկ Կրօնշտադտում 200-ից մինչև 500 րուբլի:

—

«Страна» լրագրում գտնում ենք հետևեալ թւանշաններ Ս. Պետերբուրգի և Մօսկվայի քաղաքային դումաների կազմակերպութեան վրա: Ս. Պետերբուրգի դումայի ձայնաւորների թւում կան 11 զինուորականներ, իսկ Մօսկվայում միայն 2 հոգի, Ս. Պետերբուրգում ոչ մի հոգևորական չը կայ դումայում, իսկ Մօսկվայում 4, Ս. Պետերբուրգի դումայի ձայնաւորների մեծամասնութիւնը, 64 հոգի, պատկանում են պաշտօնեաների դասակարգին, իսկ Մօսկվայում միայն 26 պաշտօնեաներ գտնվում են ձայնաւորների թւում: Պատուաւոր քաղաքացիներ Ս. Պետերբուրգի դումայում 41 են, Մօսկվայում 50, վաճառականներ առաջին քաղաքում 94 հոգի են, երկրորդում 16 հոգի: Վերջապէս Ս. Պետերբուրգում արուեստաւորներ թւով 2 են միայն, իսկ Մօսկվայում 26, իսկ գիւղացի ձայնաւորներ ոչ մի մարդ չը կայ Ս. Պետերբուրգի դումայում, այն ինչ Մօսկվայի դումայի մէջ 4 մարդ կայ գիւղացիներից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

„Новое Время" լրագիրը հաղորդում է որ Փոքր-Ասիայի հայերը դիմեցին արտաքին գործերի մինիստրութեանը, խնդրելով որ մինիստրութիւնը իր աջակցութիւնը ցոյց տայ Թիւրքաց վարչութեանը Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու գործում:

Բերլինից հեռագրում են անգլիական „Standart" լրագրին, որ մինչև որ չէյխ Իբրադուլլահը, քիւրդ ապստամբների ա-

---

Ծառան անճարացած ընդունում է այդ պայմանը և մնում ծախսարարի իշխանութեան տակ:

Մինաս փէզօիչի պարտականութիւններից մէկն էլ այն է, որ նա վճարում է ճանապարհածախս այն աղքատ վկաներին, որոնց դիւանատունը կանչում էր հեռու գիւղերից: Ամբողջ ժամերով խեղճ գիւղացիք ստիպված են լինում շլինքները ծռած սպասել, թէ երբ պէտք է Մինաս փէզօիչը բարեհաճի տալ նրանց այն, ինչ որ պէտք է ստանան օրէնքով:

—Աղա ջան, գլխիդ ղուրբան, մեզ ճանապարհ դիր. բանից գործից աւարայ եղած զուր տեղը փող ենք խարջում էստեղ—աղաչում է նրանցից մէկը:

—Ի սէր Քրիստոսի, աղա ջան, մեզ մի պահի—խնդրում է միւսը:

—Թող ըլէք գլխիցս! բարկանում է Մինաս փէզօիչը: փող ստացողը կը սպասի, չլինքն էլ կերկարի:

Գիւղացիք նորից գնում են և պատի տակին վերթափում: Մինաս փէզօիչը նրանց պահում է այն նպատակով, որ ծառայողները հեռանան դիւանատնից: Հէնց որ բոլորեքեան ցրվում են և սենեակում մնում է միայն ինքը իր մանուկ գրագրի հետ, Մինաս փէզօիչը կանչում է գիւղացիներին:

—Գիտէք ինչ կայ—խօսում է նա բողազը մաքրելով—օրէնքով ձեզնից ամեն մէկին հասնում է տաս մանէթ. բայց որովհետև տէրութեան նեղ ժամանակն է հիմայ, շատ հոգսեր և մեծ ծախսեր ունի, կառավարութիւնը հրամայել է, որ ամեն մէկից, ով դիւանատնից փող է ստանում, ծախսարարը մի բան յետ քաշի խազընի օգտին: Այս պատճառով ես ամեն մէկիցդ կտրում եմ երկու մանէթ: Ի՞նչ էք ասում:

—Ծառայ ենք, աղա ջան, ինչ ասենք: Թագաւորի հրամանի դէմ մեր ինչ բերանն ա խօսենք:

—Հա! Այ լաւ խօսք! Այդպէս միշտ ձեր մեծի հրամանները լսող ու կատարող պէտք է լինէք—գովում է Մինաս փէզօիչը, փողերը զամբիւղից հանելով: Դէ մօտ եկէք և ստացէք ձեր հասնելիքը:

—Գիւղացիք թթու ժպիտը երեսներին ստանում են ութ ութ րուբլի:

—Դէ հիմա դավթարումը ձեռք քաշէք՝ «ստացայ 10 րուբլի, ֆլան ֆլանքեասօվ.»—թելադրում է Մինաս փէզօիչը:

—Աղա ջան, գլխիդ ղուրբան, ոնց ձեռք քաշեմ, թէ 10 մանէթ ստացայ, քանի որ երկուսը կտրեցիր—համարձակվում է խոհեմութեամբ նկատել մէկը:

—Էշ հաստագլուխ! բարկանում է Մինաս փէզօիչը, կտրեցի խօ իմ ջէբս չեմ դնելու, ինչ ասում են կատարի, քանի որ գլուխդ բանից դուրս չի գալի:

Գիւղացին գլուխը պատելով ձեռք է քաշում:

Երբ բոլորեքեան ստացան փողերը և պատրաստվում էին գնալ, Մինաս փէզօիչը բռնեց նրանց առաջը:

—Ձեր որդկերանց սաղղլին, էս խեղճ եթիմին մի բան բաշխեցէք, ոչ հայր ունի, ոչ մայր. վարձքի համար պահում ենք էստեղ առանց ռոճիկի—խնդրում է նա ցոյց տալով իր մանուկ գրագրի վրա, որ աչքերը գետին գցած աշխատում է արտայայտել երեսի վրա խորին թշուառութիւն:

Գիւղացիք մի մի բան բաշխում են «եթիմին» և դուրս գալիս: Այսպիսով Մինաս փէզօիչը վեց վկաներից ստացաւ օգուտ 12 րուբլի, որոնցից երեք րուբլին մտաւ ծառայի ջէբը և դրանով լռութեան կնիքը դրօշմեց նրա բերանի վրա:

Իսկ որբ գրագիրը Մինաս փէզօիչի հարազատ որդին էր...

Արդիւնքի աղբիւրներից ամենաշահաւէտը և միշտականը ռոճիկ բաժանելու պրօցեսն է: Ամեն ամսի 20-ին այն սենեակում, ուր պարապում է ծախսարարը, կատարվում են ամենախայտառակ տեսարաններ, ծիծաղաշարժ փոքրվիներ: Ամսի 20-ին տեսնել Մինաս փէզօիչին և չատել նրան բոլոր սրտով—անկարելի է: Նրա դէմքի ամեն մի գիծը շնչում է այդ օրը ծայրայեղ անամօթութեամբ, աներևակայելի լրբութեամբ: Ամեն մի ծառայողից, սկսած ամենաբարձրից մինչև ամենացածը Մինաս փէզօիչը, անկարելի է, պէտք է մի բան պոկի՝ 20 կոպէկով, 10-ով, 5-ով, մինչև տնգամ մէկ կոպէկով! Մէկին ասում է՝ «մանր չը կայ, յետոյ կը տամ», միւսին լրբաբար աշխատում է հաւատացնել, թէ ռոճիկը լիովին տուեց, ինչպէս է պատահել, որ 2 կոպէկը պակաս է—չէ հասկանում: Աւելի բարձր աստիճանաւորների առաջ գալարվելով ներողութիւն է խնդրում, որ «մանր 32 կոպ.» չը կայ, երեկոյեան ծառայի հետ կուղարկի—և ի հարկէ երբէք չէ ուղարկում: Ուշունց, թուք, անէծք,—էլ բան չէ մնում, որ այդ օրը չը թափվի Մինաս փէզօիչի գլխին: Բայց նա համբերութեամբ տանում է բոլորը: Եւ—մի և նոյնը ճշտութեամբ կատարվում է ամեն ամիս:

Ես կարող էի դեռ շատ օրինակներ բերել, բայց նկարագրածս կարծեմ բաւական է, որ ընթերցողները կարողանան ծախսարար Մինաս փէզօիչի վրա մի հասկացողութիւն կազմել: Գուցէ մէկը նրանցից բաղդի բերմունքով ստիպված կը լինի ծառայել Մինաս փէզօիչի հետ: Այն ժամանակը նա կը համոզվի, որ նկարագրածս իսկականի հետ ուղիղ է»:

Նկատող